



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 20 » \_\_\_\_\_ 07 \_\_\_\_\_ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 206

**Հուլիսի 12-19-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Հուլիսի 12-14-ին, 16-ի գիշերը շրջանների զգալի մասում, 17-ի ցերեկը, 18-ի գիշերը հյուսիսային շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Գյումրիում՝ 138մմ, Օձունում՝ 74մմ, Ապարանում՝ 62մմ, Տաշիրում՝ 53մմ, Ամասիայում, Աշոցքում, Գավառում՝ 40-46մմ, Բագրատաշենում, Մարտունիում՝ 33-35մմ, Արմավիրում, Արթիկում՝ 30-31մմ, Արարատյան դաշտում՝ մինչև 7-10մմ, մնացած շրջաններում 18-20մմ քանակությամբ: Հուլիսի 15-ին և 19-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հուլիսի 12-14-ին ցածր է եղել նորմայից 1-2 աստիճանով, 15-16-ին եղել է նորմայի սահմաններում, 17-18-ին՝ նորմայից բարձր 1-2 աստիճանով, 19-ին՝ 3-4 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 19-ին և Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում դիտվել է +36...+39°C, Սյունիքի հովիտներում՝ +35...+37°C, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ +30...+34°C, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում՝ +26...+30°C աստիճան տարություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 14-ին և դիտվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ +7...+11°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +10...+14°C (Տաշիր՝ +8°C), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +15...+18°C (Դիլիջան՝ +11°C), Արարատյան դաշտում, Վայոց Ձորի նախալեռներում, Սյունիքի հովիտներում՝ 16...+21°C:

Հուլիսի 13-ին դիտվել է ուժեղ անձրև, որի հետևանքով Գյումրիում 6 ժամվա ընթացքում տեղացել է 81մմ, Աշոցքում՝ 34մմ քանակությամբ տեղումներ: Այդ նույն օրը Գյումրիում տեղացել է նաև կարկուտ 10-12մմ տրամագծով:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել 1900.78 մ (19.07.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է 3 սմ-ով:

Հարգանքով՝  
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան